# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի Վաղատինի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/11 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/11 պայմանագրում 2020 թվականի հոկտեմբերի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N1 | ՀՀ կառավարության 24.09.2020թ N1589-Ն որոշմամբ հատկացվել են ֆինանսական միջոցներ: |
| Փոփոխության նկարագրություն | Համաձայնագրով հաստատվել է վճարման ժամանակացույցը: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
**28.09.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/11 գնման պայմանագրի**

ք. Երևան «29» «10» 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հիդրո>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Վ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 24.09.2020թ. N 1589-Ն որոշումը և ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 28.09.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/11 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1 կետում ավելացնել նոր 5.1.2 ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<5.1.2 Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված աշխատանքների դիմաց 2020թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է **76 096 000 (յոթանասունվեց միլիոն իննսունվեց հազար)** ՀՀ դրամ, որից 12 682 667 (տասներկու միլիոն վեց հարյուր ութսուներկու հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն>>:

1.1.2 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N3-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՊԱԼԱՌՈՒ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | «Հիդրո» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 | ք. Սիսիան, Շիրվանզադե 5 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011035830 | Հ/Հ 1150008211381335 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 09804085 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| __________ Ա. Մկրտչյան | ---------- Վ. Վարդանյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված
28.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/11 պայմանագրի
29.10.2020 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N3
28.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/11 պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***
**ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներ**

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45211231/533 | ՀՀ Սյունիքի մարզի գ. Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 76 096 000 | 76 096 000 | **76 096 000** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035830
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

________________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
«Հիդրո» ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150008211381335
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն՝

---------------------- Վ. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.